

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն № 1-Լ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետի, 2018 թվականի օգոստոսի 6-ի թիվ ԲԴԽ-31-Ո-74 որոշման՝

1. Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի հունվարի 31-ի «Դատական դեպարտամենտի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 1-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի 1-ին հավելվածի:

2) Հրամանի 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի 2-րդ հավելվածի:

3) Հրամանի 7-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի 3-րդ հավելվածի:

4) Հրամանի 15-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի 4-րդ հավելվածի:

5) Հրամանի 18-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի 5-րդ հավելվածի:


2. Ընդունել ի գիտություն, որ սույն հրամանի 2-րդ հավելվածի 2-րդ, 3-րդ, 5-8-րդ և 10-12-րդ կետերով, 3-րդ հավելվածի 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-13-րդ կետերով, 4-րդ հավելվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-10-րդ կետերով սահմանված պաշտոնները

նշվում են համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի օգոստոսի 6-ի թիվ ԲԴԽ-31-Ո-74 որոշման, մինչև տվյալ որոշման մեջ օրենքով սահմանված կարգով համապատասխան փոփոխությունների կատարումը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

2021թ. ապրիլի 7
ք. Երևան



Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ